ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
«ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք.Երևան

«18» «հուլիսի» 2022թ.

Ժամը 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նիստը նախագահող՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ՝ Գարիկ Բոշյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ՝ Արայիկ Խզմալյան

Փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի օգնական՝ Շուշաննա Կոստանյան

«Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Արտյոմ Նաղդյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության գլխավոր մասնագետ Էլինար Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

Բացակայում էին

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Բագրատ Բաղալյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ՝ Ավագ Ավանեսյան

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Գարիկ Բոշյանը:

1. Տեղեկություններ հայտերի բացման վերաբերյալ

Հայտը ներկայացվել է թղթային եղանակով: Բացումը տեղի է ունեցել հրավերը մասնակիցներին տրամադրվելու օրվան հաջորդող 20-րդ օրը, ժամը 17:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի հետ:

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները

Վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ փուլին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը	Մասնակցի տվյալները
«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00167818, հասցե՝ ք.Երևան, Լեռ 1, էլ. հասցե՝ fin@factory.am, հեռախոս 099 91 92 94

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

3. Տեղեկատվություն հարցումների և պարզաբանումների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին.

4.1 Ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու համար պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ մասնակիցը պետք է ներկայացներ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած հանրային, բացօթյա, զանգվածային միջոցառումների առնվազն մեկ պայմանագրի պատճենը, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդ որում, ներկայացված պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում կանխատեսված ֆինանսական հատկացման քսան տոկոսից:

4.2 Ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատելու համար պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ մասնակիցը պետք է ներկայացներ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող տասը տարվա ընթացքում որպես բեմադրող ռեժիսոր Հայաստանի Հանրապետության հրապարակում և/կամ միջազգային նշանակության միջոցառման բեմադրած բեմադրող ռեժիսորի տվյալներ: Անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ բեմադրող ռեժիսորի հետ կնքված նախնական պայմանագիր /համաձայն հրավերի պահանջների/, որին անհրաժեշտ է կցել նաև բեմադրող ռեժիսորի ինքնակենսագրության բնօրինակը՝ հաստատված վերջինիս ստորագրությամբ և նախորդ ժամանակահատվածում որպես բեմադրող ռեժիսոր բեմադրում իրականացրած լինելը հիմնավորող փաստեր:

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել մասնակցին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2022 թվականի հուլիսի 21-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 229 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում. Կողմ – 5 , դեմ – 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝ Գարիկ Բոշյան

Անդամներ՝ Արայիկ Խզմալյան

Ավագ Ավանեսյան

Շուշաննա Կոստանյան

Արտյոմ Նաղդյան

Էլինար Ավետիսյան

Քարտուղար՝ Սոնա Շիրինյան